

Միրզոյան Լինա

Շուշիի Խ.Աբովյանի անվան միջնակարգ/ հոսքային դպրոց, 11-րդ դասարան

2-րդ մրցանակային տեղ



Ինչու՞ են մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած իրականությունը և Ջապել Եսայանի փորձառությունը
(մրցութային շարադրություն)

Մարդու իրավունքները ճանաչելը կարևոր է իր և աշխարհի ճանաչողության տեսանկյունից: Մարդը՝ բնության գլուխգործոցը, նավավար է դառնում իր կյանքի ծովի մեջ: Իր իրավունքների ճանաչումը մարդու համար ունի պաշտպանական նշանակություն, քանզի իրավունքը մարդու զրահն է: Իրավունքը հոգեկան ըմբռնում է նախ և առաջ, և ապա՝ պահանջ: Եվ թո՛ղ այն խիստ չհնչի. իրավունքն է մարդուն կյանքի ուժ տալիս, թե չէ միայն պարտականություններ ու պարտականություններ...Պարտականությունը պարտքի զգացում է, իրավունքը՝ քո,

այսպես ասած, արտոնությունը, քո ազատության ճանաչումը, քո իրավահաստատումը՝ իմ, քո, բոլորիս ազգային պատկանելության հաստատումը, որ կարևոր է մեզանից յուրաքանչյուրի համար:

Ի վերջո, սրա ըմբռնումը բերում է մարդու իրավունքների ճանաչմանը ոչ միայն մի մարդու համար և տեսանկյունից, այլ հանրության, ժողովրդի, ողջ ազգի: Իրավունքն ու <<հանգիստը>> երբեմն անհամատեղելի են. <<զուխը հանգիստ պահելը>> երբեմն հանգեցնում է ենթարկման, այնինչ իրավունքը նվաճվելու կարիք է զգում և ուժ տալիս՝ այն իրագործելու, կապ հաստատելով նախորդ սերունդների և մեր ապրած իրականության միջև: Նախորդների իրականությունը տարբերվում է այսօրվա իրականությունից՝ ընդհանրությունների կողքին ունենալով տարբերություններ:

Հաշվի առնելով, որ կյանքը պայքար է, պիտի ընդունենք, որ այն հաստատվում է ընդվզումի և իրավունքների ճանաչման պայքարով, որ գոյության պայքարն է՝ նայած, թե ով ինչ է ուզում իրենից, միջավայրից, հասարակությունից:

Հայացք ձգելով մեկ դար առաջ ապրած հայության իրավիճակին ու իրավունքներին՝ նկատում ենք այն իրողությունը, որում ապրել է Հայությունը՝ իրավունքների <<լուռ>> հաստատման կամ ընդվզումների միջոցով...

Հայության խնդիրը ապրելու իրավունքի նվաճումն է: Ինչ անես այն իրավունքը, երբ պիտի ապրես ճնշված կամ ծպտված՝ միայն գոյություն քարշ տալով, որը գոյատևելու չնչին իրողություն է սուկ:

Միաժամանակ, ապրելով ազատ, չպետք է տուրք տաս հոգուդ <<մանրությանը>>. որը կհանգեցնի քո իսկ ոչնչությանը, երբ բացակայում են նպատակներդ, և դրանք իրագործելու ուղիները չեն երևում, կամ կամքդ է ենթարկվում քեզ, և ոչ սու՝ կամքիդ, որ արգելքներ հաղթահարելու ուժ ունի:

Չենք ժխտում, որ իրավունքը տալիս է ազատություն, անդորրավետություն և հոգեկան հանգստություն: Մա հենց ինքը իրավունք է՝ ազատվել քո իսկ կապանքներից, տեսնել երկիրդ բոլոր թերություններից <<ազատված>> ու լավ զգալ պարզապես քո իսկ երկրում: Մեծ իրավունք է չէ՞ սա, մեծ երազանք:

Հուզմունքով կարդացի Ջապել Եսայանի <<Միլիդարի պարտեզները>> ստեղծագործությունը, որն իրավամբ ինքնակենսագրական հուշապատում է: Գրողը ներկայացրել է այն իրականությունը, որում ինքն ապրել է: Դա Օսմանյան

կայսրության դաժան իրականությունն է, որն ընդհանրապես հակադիր է իմ ապրած իրականությանը:

Ես փոքրիկ, բայց ազատ, անկախ ու կայացող երկրի քաղաքացի եմ, իսկ գրողը՝ մեծ բռնատիրության ճնշված քաղաքացի: Եվ համարյա անհնարին է զուգահեռներ անցկացնել իմ ու գրողի ապրած ժամանակաշրջանների միջև առանց հակադրության, մանավանդ որ ես ազերի թշնամու՝ նույն ինքը թուրքի ճիրաններից ազատագրված քաղաքի՝ Շուշիի բնակիչ եմ, իսկ Ջ. Եսայանը նախաեղեռնական ժամանակների ահուսարսափի մեջ ապրող, թե՛ գոյատևող (հաստատ պիտի ասել՝ ճնշված ժողովրդի զավակ) մարդ:

Դիմենք բնագրի պատմությանը, որ ընտանեկան կապերի (սա էր ապրեցնելու ուժ տալիս միմյանց և առանց որի հայերն ավելի հեշտությամբ կուլ կգնային արյունոտ մարդկանց արյունալի քաղաքականությանը) մի հուզիչ պատմություն է:

Գրվածքը սկսվում է հենց իր ընտանիքի պատմությամբ՝ պատկերացում տալով արևմտահայերի սովորությունների, ավանդույթների, կենցաղի, մշակույթի հպարտության և կրած տառապանքների մասին:

Թե ինչու իր տատն ամուսնացել է 14 տարեկանում, հիմնավորում է հեղինակը: Հայ աղջիկը և, ընդհանրապես, հայ կինը անազատ վիճակում էին: Ենիչերները ահուսարսափի մեջ էին պահում ազգային փոքրամասնություններին, հատկապես հայերին Ստամբուլում և ողջ Թուրքիայի տարածքում: Գրվածքում մի ընտանիքի պատմությամբ արտացոլվում է ողջ արևմտահայության ճակատագիրը:

Հեղինակի տատիկը մինչև 14 տարեկան դառնալը տան չորս պատերի մեջ է ապրել, որ չգրավի ենիչերների ուշադրությունը:

Եվ այսպիսի մի խառնակ ժամանակում Եսայանի տատիկին հարազատները տանում են եկեղեցի, քանզի խիստ պարտավորեցնող էին հայ եկեղեցու պահանջները. պատրիարքարանը հզոր էր և հսկում էր, որ հոտը կրոնական պարտականությունները կատարի և խստորեն պատժում էր անհնազանդներին ու թերացողներին: Մարդիկ երկու կրակի մեջ էին. չգնային Եկեղեցի, պատժվելու էին պատրիարքարանի կողմից, գնային կնկատվեին ենիչերների կողմից: Եվ կատարվում է անխուսափելին: Եկեղեցուց տուն վերադառնալիս ազգականներով շրջապատված Լուսիկ տատիկին, նույն ինքը <<դուդուիին>> հանդիպում են ենիչերները, որոնք հարձակվում են դեռատի աղջկա վրա, պատռում <<ֆերաջեն>>՝ պատճառաբանելով,

որ այն պատված է կանաչ գույնի զարդերով: Կանաչը մուսուլմանների համար սուրբ գույն էր և <<կյավուրները>> իրավունք չունեին այն կրելու: Սակայն ամենանպատվաբերն այն է, որ նրանք դեմքից հանում են Լուսիկի <<յաշմագը>>: Այդ պահին տարեց կանայք բղավում են, ժամկոչը և լուսարարը վրա են հասնում և օգտվելով ենիչերների միջև ծագած վեճից՝ Լուսիկին կարողանում են փախցնել և տուն տանել: Բայց աղջկա հեղինակությանն արդեն վնաս էր հասցված: Ո՞վ կամուսնանար մի աղջկա հետ, ում դեմքը տեսել էին, այսպես ասած <<հեթանոսները>>: Միաժամանակ վտանգավոր էր <<նշմարված>> աղջկան տանը պահելը: Ենիչերները նրան կարող էին փախցնել ցանկացած պահի: Իրենց տունը և ընտանիքը այդ հնարավոր անպատվությունից փրկելու համար Լուսիկի ծնողները դիմում են մի վարձկան միջնորդ կնոջ և պատվիրում որևէ փեսացու գտնել Լուսիկի համար: Նա Սկյուտարից մի երիտասարդ է գտնում՝ անունը Հակոբ: Նրանց ընտանիքը հայտնի էր խիզախությամբ ու ճարպկությամբ, իսկ Սկյուտարն այն ժամանակ տարանցիկ քաղաք էր: Լուսիկն ու Հակոբը ամուսնանում են:

Այս ամենը պարզ պատկերացում է տալիս, թե ինչքան դժվար էր հայության, մանավանդ կնոջ անագատ վիճակը Օսմանյան կայսրությունում:

Հեղինակը նկարագրում էր թուրքերի բռնությունները ոչ միայն հայերի, այլ ճնշված այլ ժողովուրդների, այս թվում <<բուլխարների>> հանդեպ՝ կազմակերպելով կոտորածները...

Ինչպես տեսնում ենք, Չապել Եսայանը իրատեսորեն պատկերել է իր ապրած իրականությունը, որում տեղ են գտել ոչ միայն ազգային ու կրոնական խտրականությունները, այլև վերի ու վարի թաղերի միջև եղած հակադրությունները՝ իր համակրանքը արտահայտելով վարի թաղում ապրողների հանդեպ:

Չ. Եսայանը պատկերացում է տալիս և Սկյուտարի Մբ. Խաչ դպրոցի մասին, որտեղից հայտնի մտավորականներ են դուրս եկել, այդ թվում՝ ինքը, Սիբիլը և այլք: Դպրոցում կային նաև լուրջ թերություններ: Դպրոցում կային նաև լուրջ թերություններ:

Այս ամենը ուսումնասիրելով՝ կարող ենք հստակ ասել, թե ինչ տվեց մեզ Չ. Եսայանի փորձառությունը: Ժամանակները եղել են անողոք թուրքական

բոնաստիրության լծի տակ ապրող հայերի համար, բայց հայ ընտանիքները ուժ են ունեցել դիմադրելու՝ սատարելով միմյանց: Ուժեղ են եղել ազգակցական կապերը՝ անարատ և ավանդապաշտ: Եկեղեցին գործել է հոգուտ հայության՝ թեկուզ երբեմն չափից ավելի խստություններ և պատիժներ կիրառելով, միննույն ժամանակ հայությանը համախմբելով իր շուրջ:

Մեծ է եղել հայ կնոջ դերը ընտանիքի պահպանման գործում:

Ազգի արևմտյան հատվածը գոյատևել է մշտական ահուսարսափի պայմաններում. բոնաստիրության տակ էին ապրում հայերը, հույները, բուլղարները, ինչպես նաև հրեաները և սուլթանները գործածում էին մեծ բռնություններ՝ քրիստոնյա ժողովուրդներին ստրկացնելու համար:

Հայերը ընդվզում էին, և խմորումը կատարվում էր նաև և առաջ իրենց հոգում: Ատելությունը սուլթանների և նրանց համախոհների հանդեպ կուտակվում էր հայության հոգում: Անցյալի կարոտ կա գրողի հուշապատման մեջ:

Մինչև ո՞ր հասավ այս պատմությունը և որտե՞ղ կանգ առավ:

Պատմությունը ընդհատվեց, քանզի առջևում այլևս ապրելու իրավունք չկար, սև գիծ էր քաշված հայ օջախների վրա: Եղեռնի տարտարոսը անխնա կուլ տվեց հայ օջախները:

Այլևս չկար հայոց մեծ երկիրը, չկային հայության մեծամասնության գանձերը, ամեն ինչ մոխրացել էր, և մարդկանց հնամյա կենցաղն ու սովորույթները կսկծալի կարոտ էին արթնացնում եղեռնապուրծ հայերի հոգում անցյալի հիշատակների առջև: Պատմում էին ու գրում, որ չկորչեն այդքան թանկ հիշողությունները, որ հայության մի մեծ հատվածի պատմությունն է՝ քաղցր ու կարոտալի օրերով շաղախված, դառն ու դաժան: Առջևում գաղթի ու պանդխտության անորոշ շավիղներն էին՝ մշուշների մեջ թաքնված...

Ի՞նչ տվեց ինձ այս պատմությունը, և ի՞նչ կապ ունի իմ ապրած իրականության հետ: Այն որ հայրենիքը միակ սրբությունն է, որ մենք ժառանգություն ենք ստացել ընդվզումներով ու պայքարով: Կորցրել ենք անձայրածիր հայրենիքը, սակայն ամրագրել նորը՝ ազատագրված այս մի թիզ հողը: Պահպանվու՞մ է ավանդականը մեր ընտանիքում՝ անշուշտ. սա մի ազգի հիմքն է, մեր հայրենիքի պատվարը: Եվ հայրենիքում եկեղեցու զանգերը դողանջում են զիլ, դպրոցների զանգակները՝

կարկաչում, ծիլ է տալիս նոր կյանքը:

Ձգտում ենք կառուցել նոր ու հզոր հայրենիք՝ պատվարժան մարդկանցով, քաջ զինվորներով: Ազատ է հայ մարդն իր երկրում և ումի՞ց վախենա: Ինքնիշխան է հայ մարդը, քանզի իր երկրի տերն է, աշխատում է, ջանք թափում և հաղթահարում դժվարությունները՝ դեպի առաջ նայելով, դեպի հուսալի և լուսավոր ապագա, որ ավելի է ամրակայվում մեր կենսահաստատությամբ, հերոսությամբ, նվաճումներով...